Անգլերենով դասավանդվող ֆակուլտետներ՝
https://www.uaic.ro/en/international/staff-mobility-for-teaching/

Աշխատակիցներից պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

1. **Օտար լեզվի (անգլերեն) իմացությունը հավաստող փաստաթուղթ/վկայական** (առնվազն B2
մակարդակ)

Անգլերենի բազային բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցները օտար լեզվի իմացությունը հավաստող վկայական չեն ներկայացնում:

Միջազգային ճանաչում ունեցող(TOEFL,IELTS) վկայական ներկայացնելու դեպքում դիմորդն ազատվում է ՎՊՀ-ում թեստ հանձնելուց:
Վերոնշյալ վկայականների բացակայության դեպքում օտար լեզվի իմացության փաստաթուղթ կտրամադրվի ՎՊՀ-ի կողմից՝ թեկնածուների լեզվի թեստ հանձնելուց հետո:

Թեստը կգնահատվի առավելագույնը 100 միավոր (դասավանդողների համար անցողիկ շեմը՝ 80 միավոր): **Թեստի արդյունքը չի համարվում մրցութային ցուցանիշ, այլ վկայում է լեզվի իմացության մասին:**

Մոտիվացիոն նամակ — գնահատվում է առավելագույնը 100 միավորով գնահատող հանձնաժողովի կողմից (համարվում է մրցութային ցուցանիշ):

2. **Ինքնակենսագրություն /CV**(չի համարվում մրցութային ցուցանիշ):
3. **Համապատասխան տեղեկանք**՝ հաշմանդամություն ունենալու դեպքում: